



ու օտարազգիք միահամուռ կը վկայեն այս՝ վեհ սրտին վեհագոյն առաքինութեան խոնարհամտութեան... Իսկ իւր 22ամեայ վարչութեան ժամանակ՝ գիտցաւ մեր Հայրն՝ քաջալերել, սրտապնդել եւ ազդու խրատներով՝ ի ծանծաղ հանել Միաբանութեան նաւակը՝ խորտակելով խորտակիչ խութերը: Շատ ու երկար տարիներ պիտի յիշատակուի Միաբանութեանս մէջ Գեր. Գովրիկեանի խոհեմ վարչութիւնն, որով՝ աղմուկից ու փոթորկալից ծովէ մը՝ նաւահանգիստ գերծուց այն նաւակը՝ որ արդէն ծովամայն կորուսեալ կը համարուէր շատերէ... Եթէ կ'ողբանք այսօր այս կորովի Առաջնորդին մահն՝ իբր հայրասէր որդիներ, կը համակերպինք Նախահնամութեան վճռոյն, ապահով ըլլալով՝ թէ ըստ ժամանակի պահանջման Նոր Հայր մը պիտի յարուցանէ իբր նոր նաւուղի մը, կառավարելու Մխիթարայ այս Յարկը, որ պիտի գիտնայ՝ ինչպէս միշտ, տալ ԿՐՕՆ-ԲԻՆ ու ԵԿԵՂԵՑԻՈՅՆ, ինչ որ կը պահանջուի իրմէ, եւ ՀԱՅ Ազգին՝ ապրելով իբր հայախումբ խմբակ մը՝ հաւատարիմ մտալով Մեծին Մխիթարայ յառաջադրած ու նախասահմանած ծրագրին, պայծառացնել Ազգն՝ գրականութեամբ ու դաստիարակութեամբ...:

Գերապայծառ Գրիգոր Գովրիկեան, ծնած է ի Սամուշույ վար 1840, Մայիս 14ին. իբր 14 տարեկան պատանի՝ 1854 Յուլիս 24ին վանք մտած ու 1861 Մայիս 9ին քահանայ ձեռնադրուած է: 1909 Յուլիս 19ին կը գումարուի ընդհանրական ժողովը Վիեննական Մխիթարեաններու Ընդհանուր Արքայի ընտրութեան համար եւ ձայները կը միանան Հ. Գրիգոր Վ. Գովրիկեանի վրայ: Տարի մը չանցած 1910 Մայիս 6ին Պիոս Ժ. Բահանայապետը զինքն Արքեպիսկոպոս Մծքնայ կ'անուանէ եւ եպիսկոպոսական ձեռնադրութեան շքեղ հանդէսը կը կատարուի նոյն տարւոյ Յունիս 12ին:

Ուրիշ տեղ՝ նկարագրուած է իւր իբր Տպարանապետ, Եղիսաբեթուպոլսոյ Դրամատան վարիչ, վարժարանաց վարիչ, ժողովրդապետ եւն. վարած պաշտօնները. հարեւանցի կը յիշատակենք զատոնք, քայց իբր ազգասէր հունգարացի հայ՝ աննման ու անհամեմատ արդիւնք ունի Գովրիկեան: Գովրիկեանի գրական երկասիրութեանց մէջ ամէնէն արդիւնաբեր եւ օգտակարներէն եղած է՝ Բ. Սոնգրիի հետ հաստատած «Armenia» հունգարալեզու ամսագիրը (1886—1907): Շատ լաւ մտածուած ու գործադրուած ծրագրով մը՝ «Armenia»-ն միայն եւ միայն հայկական յօդուածներ, հայ մանրալրեր, առակներ, վիպակներ կը բերէր ամէն ամիս: Հայաստանը ծանօթացնել էր միտքը՝ հունգարացի հայասէր ու հայազգած, քայց օտարալեզու ազգայնոց: Հիանալի ճարտիկութեամբ կըրցաւ Գովրիկեան իւր

1 Յուշարձան գրական ժողովածոյ Վիեննա 1911, էջ 14—15:



շուրջը հաւաքել՝ հայասէր գրողներու խումբ մը: Ամսագիրը 21 տարի շարունակուելէ ետքը, դադրեցաւ սակայն Բ. Սոնգրիի մահուամբ եւ քիչ յետոյ Գովրիկեանի հեռանալով: Թէեւ դադրեցաւ իբր կոթող կ'արձանանան այս ամսաթերթին իւրաքանչիւր պրակներն՝ արեւելքն արեւմուտքի յիշեցնելու եւ սիրընելու:


Բայ միակողմանի պիտի ըլլար Գովրիկեանի գրագիտութիւնը, եթէ արեւմուտքն ալ չծանօթացնէր արեւելքի: «Հանդէս Ամսօրէի», շատ շատ էջերն գրուած են Փիլիսոս, Յովհ. Անեցի, Թոթակից եւն: Գովրիկեան սրողուած էր այս գրական քաղաքածու կեղծանուններու տակ:

Գովրիկեան գրող մը կամ հաղորդող մը չէր միայն: Իւր ամենամեծ արդիւնքներէն մէկն էր՝ գրատուններու եւ դիւաններու փոշոտ ծրարները քակել, հնամեայ դաշնագրիներ, հրովարտակներ, ազատագրեր հանել հրապարակ. այնչափ որ կը զարմանար մարդ, թէ ինչպէս լոյս աշխարհ կու գային Տրանսիլուանիոյ գաղթականներու կեանքը եւ ստացած առաւելութիւնները: Այս գործերով ու յօդուածներով է որ պարզուեցաւ հունգարահայ գաղութին պատմութիւնը:

Այնչափ կարեւոր էին այս հրապարակագրութիւններն որ իբր երկհատոր ստուար երկեր՝ արժանացան նոյն իսկ Իգմիլիւեան կտակի մրցանակին...: Դեռ շատ թարմ է Բահանայութեան 50 ամեայ յորելեանը, զոր տօնեց Գեր. Հանգուցեալը՝ 1921ին ի Վիեննա՝ պերճաշուք հանդիսի, եւ զոր նկարագրած է «Հանդէս Ամսօրէայ» Մայիս—Յունիս միացեալ թուին մէջ: Գերապ. Գովրիկեանի Ազգին եւ օտարներու առջեւ վայելած համարման վկայ են նոյն առթիւ իրեն որդուած գեղեցիկ նուէրներն ու դրամական նպաստներն՝ Մխիթարեան Մատենադարանին, եւ քաղմաթիւ նամակ ու հեռագիրները: Բայց եւս առաւել մեծագոյն վկայ են Գովրիկեան Արքայօր՝ քաղաքիս նոյն ժամանակի բարձրաստիճան անձնաւորութեանց ցոյց տուած համակրանքը, նախարարներէ ու պաշտօնեաներէ շատերն անձամբ եկած եւ մասնակից են եղած հանդիսութեանց:

Անշուք գործող էր Գովրիկեան, համբերատար պրպտող մը, որ հաւատարիմ իւր համեստ խոնարհամտութեան՝ գրական երկերու դէպք ու կուտակներ կը բարձրացնէր. եւ նպատակն էր՝ կենդանացնել կամ մացորդները պահպանել կորստէ, պահպանելով հայ գաղութներու գրաւոր ու անգիր յիշատակները: Եթէ յաջորդ տարիներու մէջ Հայաքաղաքն (Կերլա) ունեցաւ իւր սեպհական թանգարանն ուրիշ պատուական հայազգի ու հայասէրներու խնամքովը, ըսն հիմնարկողներն էին՝ Գովրիկեանի գաղափարներն ու քաջալերիչ յորդորները: Այսօր կը յանձնենք զինքը հողին, քայց հողէն դուրս կը մնայ իւր ազգասէր, հայանորոգ գործունէութիւնը: Հողը

պիտի չկարենայ մեր սիրելի Գովրիկեանը ծածկել մեր աչքէն ու մեր մտքէն: Գովրիկեան գիտցաւ թէ Վանքին եւ թէ Ազգին մէջ ցուցադրել իրական յիշատակարաններ, որոնք ընդ երկար պիտի պահպանեն իւր անունը՝ գործունեայ հայ անհատներու շրջանակին մէջ, քայց ընդյաւէտ պիտի յիշեցնեն նաեւ իւր առաքինի վարքը, աղօթասիրութիւնն եւ իւր խոհեմական Առաջնորդութիւնը:



Գովրիկեան Աբբայօր արքեպիսկոպոսական զինանշանը:




## ՀԱՆԳԻՍ

### ԴԿՏ. Հ. ԱՂԵՔՍԱՆԻՐ ՎՐԴՊ. Ի ՄԱՏԻԿԵԱՆ

Մխիթարեան Միաբանութիւնս խորին վշտով զգածուած կը ծանուցանէ «Հանդիսի» յարգոյ ընթերցողներուն իր կարկառուն դէմքերէն մէկուն տարածամ մահը յանձին Հ. Աղեքսանդր վրդ. Ի Մատիկեան:

Ծնած 5 Յուլիս (հին տով:) 1886ին Տայոց աշխարհի Խոտորջրոյ Կրման գիւղը, հնգետասանամեայ պատանին Դանիէլ — այս է Մատիկեանի աւագանի անունը — չգտնելով իր ընագաւառին մէջ քաւարար յագուրդ ուսման՝ կը դիմէ Վիեննա-



1910ին կը քահանայանայ իբրեւ անդրանիկ ձեռնադրեալը Գովրիկեան Գերապայծառ Աբբայօր:

Թէպէտ քաջ հրահանգած էր Հ. Մատիկեան վանքին արտնին կղերանոցի մէջ աստուածաբանական ուսումները, սակայն զանոնք աւելի կատարելագործելու նպատակաւ կը յաճախէ Աւստրիոյ ոստանին համալսարանը, եւ յաջողութեամբ աւարտելով աստուածաբան-

ական քուրթ ծիւղերը՝ 1917ին կը պսակուի ակադեմիական Դոկտորի տիտղոսով: — Հայերէնէն զատ գիտէր նա լատիներէն ու գերմաներէն, ծանօթ էր նաեւ գաղղիերէն եւ հին յունարէն լեզուներու:

Հմուտացած գիտութիւններու պաշարով կը նուիրուի Դկտ. Մատիկեան նախ ըլլալով հայ ազգային պատմութիւնը կ'ուսումնասիրէ «Ընանունը կամ Կեղծ Սերէոս», ընդհանուր կրօնա-պատմական նիւթի մէջ իր հմտութիւնը ի յայտ կը բերէ «Կրօնի ծագումը եւ դիցաբանութիւնը քստ համեմատական կրօնագիտութեան», անուն կրող հատորով: Ընդարձակ աշխատասիրութիւններու երրորդ արդիւնը կ'ըլլայ «Լրայ գեղեցիկ, համեմատական-քննական ուսումնասիրութիւն», Բաց ի այս հատորածն գործերէ, որոնք «Հանդէս Ամսօրեայէ» արտատպուած են, նոյն ուսումնասիրութիւն մէջ գրած է Դկտ. Մատիկեան ինչ ինչ յօդուածներ նմանապէս հայկական բովանդակութեամբ: